հայրն ու մայրը, նրանց վարժապետները չեն սովորեցրել համբերել: Բայց մեր գիւղացիներին այսքան նեղացնում են, կաշին մաշում են, հոգին հանում են, նրանք դարձեալ համբերում են, որովհետեւ երեխայութիւնից սովորել են համբերել...

— Բայց Կարօն եւ իր ընկերներն ուրիշ տեսակ մարդիկ են, իստակ այնպիսի մարդիկ, որպէս պէտք է լինի մարդը: Նրանք հօրից եւ մօրից որբ են մնացել, այդ պատճառով ընտանիքը չէ փչացրել նրանց: Քահանա-վարժապետից շուտ հեռացան, եւ դպրոցը չկարողացաւ բոլորովին մեռցնել նրանց մէջ մանկութեան կենդանութիւնը: Ընկնելով այլ շրջանի մէջ, օրինաւոր մարդկանց ազդեցութեան տակ, տարբերելով աշխարհի փոթորիկների մէջ, նրանք ստացան բոլորովին այլ բնաւորութիւն: Եթէ հայոց զաւակների գոնեայ մի փոքր մասը այնպէս լինէր, որպէս Կարօն եւ սրա ընկերները, այդ ազգը շատ բախտաւոր կլիներ...

— Հայերը այս երկրի ազգաբնակչութեան մէջ բազմութիւն են կազմում.բայց քուրդը, որ աւելի սակաւ է թոով, տուն-տեղ չունեցող, թափառական քուրդը տիրում է հային, նրա վրայ աղայութեան է անում: Ի՞նչ է պատճառը, — այն, որ քուրդը կենդանի մարդ է, իսկ հայը մեռած: Բանը շատութեան ու քչութեան մէջը չէ, գլխաւոր բանը սրտի մէջն է. ի՞նչ կարող է շինել մի մարդ, երբ որ սիրտ չունի: Այսօր ես իմ աչքով տեսայ, թէ որպէս երեք յօդի հայ տղերք կը ռոեցան աւելի քան յիսուն ձիաւորի հետ. բայց ես այն աւազակներին ճանաչում եմ, նրանց գլխաւորը Մուրադ-բեկն էր, որ իր խումբով մի ամբողջ երկիր կարող է թալանել:

— Հիմա լսիր, որդի, — ծերունի որսորդը խօսքը դարձրուց դէպի ինձ. — թէ ուզում ես այս աշխարհում ապրել, պէտք է գայլի հետ գայլ դառնաս. գառան հետ՝ գառն. գլուխդ մի՛ խոնարհեցրու, թէ չէ, ծեծողներ շատ կը գտնոեն, ողորմած եղիր դէպի քեզնից տկարները, բայց թշնամուդ մի՛ խնայիր. սրբիր անբախտի արտասուքը, մխիթարէ նրան, եթէ այդ կը պահանջէր մինչեւ անգամ քո կեանքը, քո արիւնը:

Ծերունի որսորդի այս երկար քարոզի միջոցին ես ոչ այնքան լսում էի նրա խօսքերը, որքան նայում էի Մարօի վրայ. իմ բոլոր ուշադրութիւնը գրաւել էր նրա երեսը իր շարժուն եւ զգայուն բացատրութիւններով: Հօր խօսքերը, երեւում էր, թափանցում էին նրա սրտի խորքի մէջ, որպէս բարեբեր սերմը պատրաստուած հողի մէջ: Նրա աչքերն աւելի եւ աւելի վառւում էին, բարակ շրթունքները դողում էին. թշերի կարմրութիւնը բոլորովին թռաւ, մնաց միայն մուգ-դեղնութիւնը, որ տալիս էր նրա դէմքին պղնձի գոյն: Ի՞նչ էր, որ